ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 09, 27.07.2023թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 25.07.2023թ. որոշում (որոշում **ԲԺ0201-01/L**) ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 5-րդ կետի 5.1 ենթակետը լրացնել նոր պարբերությամբ և կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ԲԺ0201-01/Լ
Դաս: ՀՊ
«25» հուլիսի 2023թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21[1]-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 10.2 կետի «ա» ենթակետը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 5-րդ կետի 5.1 ենթակետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
   «Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը գերազանցող շուկայական արժեքով տեղաբաշխման դեպքում անվանական արժեքը գերազանցող մասը ձևակերպվում է որպես էմիսիոն եկամուտ, որը կարող է օգտագործվել միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ Բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը:»՝ կանոնադրությունը հաստատելով նոր խմբագրությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • ARARATBANK OAO • 02500518